

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2015 թվականի հուլիսի 30-ի թիվ 3 որոշմամբ հրապարակվում է

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԾՁԲ-15/14-2

Պատվիրատուն՝ ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-15/14-2 ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը:

Հարցադրում:

<ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ի կարիքների համար թարգմանության ծառայությունների ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթի ընթացակարգի հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագրով նախատեսված է, որ գնման առարկա հանդիսացող թարգմանության ծառայությունների համար սահմանված է, մեջբերում հրավերից.

<Բանավոր և խուլ համրերի համար սուրդո թարգմանությունը կատարվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Կատարողը՝ Պատվիրատուի պահանջը ստանալու օրվանից դատավորի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը: Նշված թարգմանությունների մեկ միավորի գինը հաշվարկվում է ժամով, որը ներառում է բացառապես դատական նիստի փաստացի տևողությունը, և որը հավաստվում է տեղեկանքով>:

Խնդրում եմ Ձեզ պարզաբանում տալ հետևյալ հարցի վերաբերյալ. թարգմանիչ ներգրավված դատական նիստը նշանակված ժամից ուշ սկսելու դեպքում(իսկ դեպքերը բազմաթիվ են, երբ դատական նիստերը

նշանակված ժամից հետաձգվում են ընդհուպ մինչև մեկ ժամ), ինչ կարգով է կամ ինչպես է փոխհատուցվելու թարգմանության ծառայություն մատուցող կազմակերպության հասցված վնասը կամ կորցված եկամուտը, քանի որ կազմակերպության թարգմանիչները երբ ներգրավվում են որևէ բանավոր թարգմանության ծառայության մատուցման նրանց վճարումը կատարվում է իրենց ծանուցված դատական նիստը նշանակված ժամանակահատվածից, քանի որ թարգմանիչները նշանակված ժամից գտնվում են համապատասխան դատարանում և յուրաքանչյուր հետաձգված նիստի ընթացքում դա նաև կորուստ է թարգմանչի աշխատաժամանակի

Հարցադրման ստացման ամսաթիվ: 29 հուլիսի 2015թ.:

Պարզաբանում:

<<< դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ի կարիքների համար թարգմանության ծառայություններ ձեռք բերելու նպատակով հայտարարված <ԴԴ-ՇՀԾՁԲ-15/14-2> ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագրով հստակ սահմանված է, որ բանավոր և խոլ համերի համար սուրդո թարգմանությունների դեպքում թարգմանության գինը հաշվարկվելու է բացառապես դատական նիստի փաստացի տևողությամբ: Այսինքն, հարցմամբ ներկայացված դեպքում՝ դատական նիստը նշանակված ժամից ուշ սկսելու ժամանակահատվածի համար վճարում չի կատարվելու: Հետևաբար, նշված գնման ընթացակարգի մասնակցելու դեպքում Ձեր գնային առաջարկը կարող եք ներկայացնել վերոնշյալի հաշվառմամբ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գրիգոր Ներսիսյանին:

Հեռախոս՝ 010-511-788:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ <<< դատական դեպարտամենտ> ՊԿՀ: